



Ղ.ԱՂԱՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պ ԵՏՀՐԱՏ

ՀԱՅԱՊՈՍ ԱՂԱՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ


20725

A 38290



9682708

ՀԿԵՆ ԿԿ ԿԻՑ ԵՆԿԱՊԱՏԱՆՆԵՐԿԱՆ ԱՊՏԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ ԲՈՒԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Պատ. խմբագիր՝ Թ. Ասրյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Մասազյան
Մտարարիչ՝ Թ. Լավենիան

Քլաիկոսի տպար. գ. 1703 Նրտա 1220.

Պատվեր 1000 Տիրում 4000

Թուղթ. 60x84 Տղա զրանիան 1/3 ժամ.

Մեկ ժամ. 20780 նիլ Վեղիճակային 1 ժամ.

Լանկեզամ և արատարա թյան 30 սեղաններ 37 թ.

Ստորագրում և ապագա թյան 27 զեկա. 1927

Ձեռք 50 կ.

Չեմբուսի ապարան, Սերիան, Լենինի փող 62

ԹՌՉՆԻԿՆԵՐ

ԱՂՈՒՆԱԿ

ՂՏՆ — զՏՆ — զՏՆ,
Ա — զՏՆ — զՏՆ,
Նա՛կ, նա՛կ
Ա — զՏՆ նա՛կ,
ԹՐ՝ ուս...

ԿԱԶԱՂԱԿ

Չմ — չմ — չմ,

Կա — չմ — չմ,

Ղակ — դակ,

Կա — չա — դակ,

Թ՛քոոո...

Մ Ի Տ Ի Կ

Միա եմ, ծիա եմ, ձըլլըլում եմ,
 Ճիի՛կ, ճիի՛կ, ճիի՛կ,
 Վաստաստաստում եմ, թռչկոտում եմ,
 Տիի՛կ, տիի՛կ, տիի՛կ,
 Աբի, թեվիկ,
 Աբի, փեարիկ,
 Վոր յես դանամ
 Փոքրիկ ծիաիկ
 Փոքրիկ ծիաիկ
 Պիծիկ միծիկ
 Թը՛սոս...

Ա Ք Ա Ղ Ա Ղ

Աքաղաղը կանչում է,
 — Մուղրուղն,
 Ղու — դու — դո՛ւ,
 Պառավ նանը զարթնում է,
 — Տա — տա — տան,
 Պա — պա — պան...

Աքլոր, ինչո՞ւ կանչեցիր,
 ինչո՞ւ նանին զարթեցրիր,
 Ա՛խ դու — դո՛ւ,
 Ա՛յ Ղու — Ղո՛ւ

Ա՛յ նանի, ջա՛ն նանի,
 Մեզ մի վեր կացնի,
 Թող մի քիչ ել մնանք,
 Քնից լավ կշտանանք:

Աքլարը շուտ է կանչում,
 Աքլարը քեզ է խաբում,
 Աքլա՛ր, ինչո՞ւ կանչեցիր,
 ինչո՞ւ նանին զարթեցրիր,
 Ա՛խ դու — դո՛ւ,
 Ա՛յ Ղու — Ղու...

Ա Ր Ե Գ Ա Կ

Արև-արև, յեկ, յեկ,
 Ձիզի քարին վեր յեկ.
 Ան-սև ամպեր, հեռացեք
 Արևին ճանապարհվեք:

Թողեք դա դա մեզ մոտ
 Դրա լույսին ենք կարոտ.
 Կարմիր արև, յեկ, յեկ,
 Նախշուն քարին վեր յեկ:

Արևն հաղթեց ամպերին,
 Շողջը ձգեց սարերին,
 Ձիզի քարը տես, տես,
 Պայրդում ե փոսկու պես:

Սիրուն արև, միշտ յեկ,
 Ձիզի քարին վեր յեկ:

ԾԻՏԸ ՅԵՎ ԲԱԶԵՆ

Ծիտը ծառին ծլկրլում է —

— Ծիվ, ծիվ, ծիվ.

Բազեն զլխին պարտավում է —

— Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ...

Ծիտը չսեց, ծիտը վախեց —

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ...

Բազե, թը՛սս, բազե թը՛սս —

— Հա՛յ, հա՛յ, հա՛յ...

Բազեն թռավ,

Բազեն փախավ,

Ի՞նչ լավ ելավ

— Հե՛ — հե՛ — հե՛...

Ծիտիկ, միտիկ, պիծիկ միծ

Պրտպրտուրիկ, չըլպըլտուրիկ,

Դու լավ պրծար չար բազեյի

Սուր ճանկերից, հա՛ — հա՛ — հա՛...

ԱՌԱՎՈՏԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Արեգակը դուրս ե յեկել
Պսպրդալով,
Շողքը հերթից ներս ե ընկել
Շողշողալով.

Ծիաը ծառին կշկշում ե
Ծրվրվալով,
Զորունն առուն քըչքըչում ե
Վըշվըշալով.

Ծույլ տղայի քունն ե տարել
Սըռմփալով.
Տրեխները շունն ե տարել
Մըռմըռալով.

Ճ Ա Խ Ա Ր Ա Կ

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
 Մանիր սիպտակ մալանչներ,
 Մանիր թելեր հաստ ու բարակ,
 Վոր յես հոգամ իմ ցավեր:

Ձեթ եմ ածել ականջներդ,
 նոր շինել եմ շրաբվիկ,
 Դեհ, շուա շարժիր լայն թևերըդ
 վոստեր շինիր սրբուլիկ:

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
 Լխեռնիկըդ պարտիր,
 Մանիր թելեր հաստ ու բարակ
 Իլիկիդ վրա փաթաթիր:

Տիգրանիկս գուլպա չունի,
 Հանդ ե գնում վոտարաց,
 Գարբիելս չուխա չունի,
 Միշտ անում ե սուգ ու լաց:

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
 Մանիր սիպտակ փաթիլներ,
 Մանիր թելեր հաստ ու բարակ,
 Վոր յես հոգամ իմ ցավեր:

Ձրվալ չունենք, չաթու չունենք,
 Վոչ սամոտեն, վոչ պարան,

Այսպէս աղքատ դեռ յեղած չենք,
Կարփել և ամեն բան:

Գեռ հարս եյի, վոր գործեցի
Քանի կարպետ, խալիչա,
Բայց դքանցից շուտ գրկվեցի,
Հիմա չունեմ մի քեչա:

Կարմիր որբս յերբ սևացավ
Յե՛վ պարաք մնաց՝ թեև քիչ,
Պարտատիրոջ սիրտն ել սեցավ
Յեկավ տարավ ամեն ինչ:

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սիպտակ քուլաներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Վոր յես հոգամ իմ ցավեր:

ՏԱՎԱՐԱՄԻ ՃԱՇԸ

Մի խամ տափարած,
Բափական քաղցած,
Աղբրի մոտ նստած,
Ուտում եր չոր հաց:

— Ցամաք մի ուտի,
Ասաց ընկերը:
— Բա ինչնով ուտեմ,
Ուրիշ բան չունեմ:

— Դանակով, յեղբայր, դանակով...
— «Այդ լավ ասացիր.
Դանակով կտրեմ,
Ջրումը թրջեմ,
Ել պամաք չուտեմ»...

ՀՈՎԿԻ ԱՆԿՈՂՆԵԸ

Սարի լանջն ե մահճակալ...
Չեչոս քարը՝ զլխակալ-
Մի հին կարպետ ուսերին,—
Այս ե հովիվի անկողին:

Յերբ անձրև ե կաթկաթում,
Յեմ կարպետը թըխկթըխում,
Հովիվն անուշ քնի մեջ
Քաղցրը յերազ ե տեսնում:

Յեմ խնդում, ծիծաղում.
Ուխտ՝ յ, ուխտ՝ յ, սիրուն հովիվ
Քունդ անուշ...

ՋԱՂԱՅՊԱՆԻ ԲՈՒՆԸ

Յերեք-չորս հաս ջաղացաքար,
Կարգով շարված պարավում են,
Իրենց ահեղ գոռգոռոցով
Սմբողջ շենքը գլլրրում են:

Չանշախների չբխկչբխկոցից
Մարդի ախանջ խլանում է,
Իսկ ջաղացպանն այրաթաթախ,
Քոր քունն քնկած խրորմփում է:

Բայց ջաղացը յեթե հանկարծ
Կարև ձայնը, լռե, սառչի,
Ինչպես մի թունդ թնդանոթից՝
Ջաղացպանը վեր կբթռչի...

ՊԱՌԱՎԻ ՇՈՐՔ

Ձյուն եր դայիս փաթիլ-փաթիլ
Հետն ել անձրև կաթիլ-կաթիլ,
Այս միջոցին մի պառավ կին
Հորթ եր փնտուռմ դաշտի միջին:

Կովը յեկավ տավարիցը,
Կուրծ ու ծրծեր կաթով լիքը.
«Հորթուկս ուր ե», նա բառաչեց,
Խեղճ պառավին լացացրեց:

Մինչդեռ այսպես պառավ ու կով
Վողբում եյին լաց ու կոծով,
Հանկարծ լավեց մի բարակ ձայն,
Կովն իմացավ, փոր հորթն ե այն:

Կովը վազեց բառաչելով,
Պառավն յետքից տընքտընքալով,
Կուրծ հորթը մորը գտավ,
Լիք ծրծերը բերանն առավ:

Ծրծեց բոլոր կաթն ու տուգեց,
Տանտիկնոջը բան չբթողեց.
Բայց պառավը այս անգամին
Սիրով ներեց շար հորթուկին:

ՀԱԶՎՈՐՆԵՐ

Ահա յեկավ խոտ հարողը,
Ուսին դրած գերանդին,
Բոլոր խոտը սա հարել է,
Բան չի թողել մեր հանդին:

— Այ խոտ հարող, սաս տեսնենք,
Դու ինչպես ես խոտ հարում,
— Այսպես ահա, լսով նայեցեք,
Յես այսպես եմ խոտ հարում —
Հի՛ւյ, հո՛ւյ,
Հի՛ւյ, հո՛ւյ:

— Ա՛խ, ե՛նչ լավ է, յեկ սովորենք
Մենք էլ այսպես խոտ հարենք —
Հի՛ւյ, հո՛ւյ,
Հի՛ւյ, հո՛ւյ:

* * *

Ահա յեկավ մեր հսձողը,
Ձեռքին փայտե մատնոցներ
Պատրաստել է սուր մանգաղը,
Պետք է հսձի մեր արտեր:

— Հսձող յեղբայր, սաս տեսնենք,
Դու ինչպէս ես հուճճ անում:

Այսպէս ահա, լսով նայեցեք,
Յես այսպէս եմ հուճճ անուճ —
Հիւյ, հո՛ւյ, հեւյ,
Հի՛ւյ, հո՛ւյ, հեւյ:

— Ա՛խ, ինչ լալ ե, յեկ սովորենք,
Մենք ել այսպէս հուճճ անենք,
Հի՛ւյ, հո՛ւյ, հեւյ,
Հի՛ւյ, հո՛ւյ, հեւյ:

A 38290



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏԱՆ



Ա Ր Ե Վ

Արև, արև, դու մեղանից
Յերբ հեռացար դեպ հարավ,
Զմեռն յեկավ և ամեն ինչ
Հափշտակեց ու տարավ:

Սիրուն արև, ել մի գնար,
Մեզ մի թողնի՛ր քեզ կարոտ,
Քեզ կրպատվենք, քեզ կըզոգենք
Միշտ; իրիկուն, առավոտ:

Վարջան զոհ ենք, վոր դու բերի՛ր
Քարնան անուշ յեղանակ,
Ա՛խ, յերանի գարուն լինի
Տարին բոլոր ժամանակ:

Տես, թե ինչպես փթըթել են
Ծառ ու ճճաղիկ, կանաչ խոտ,
Տես թե ինչպես տարածվել ե
Ամենայն տեղ անուշ հոտ:

Քեզ են գովում թռչնիկները
Իրանց քաղցը դալալով,
Հովիվը իր մեղմ սրինգով:
Հոտաղն անուշ հոլովով:

Չե, արև ջան, ել չըգնաս,
Ել չըթողնես մեզ կարոտ,
Գնա քնի՛ր գիշերները,
Առավոտը յեկ մեզ մոտ:

Մ Ա Ն Ո Ւ Շ Ա Կ

Սիրուն մանուշակ, ինչո՞ւ յես թողամե՛ս,
 Կապույտ աշիկներդ ինչո՞ւ յես փակե՛ս,
 Քեզ նի՛ նեղացրեց, նի՛ վառ բան ասեց,
 Քո անուշ հոտովդ նի՛ չը գմայլվեց:

— Սիրուն մանուկներ, դուք ինձ սիրեցե՛ք,
 Իմ ծաղիկներից փնջեր կապեցե՛ք,
 Բայց կոշտ ձեռներից, կոպիտ ճանկերից
 Ինձ չազատեցիք, չըպահպանեցիք:

Քնքույշ սրտերը շուտ են կտորվում,
 Քնքույշ ծաղիկները շուտ են թառամում.
 Քանի՛ վոր անխիղճ մարդիկ կրլինեն,
 Յերկար չեմ ապրի՛ յես այս աշխարհում:

ԼՈՒՍՆԱԶԱԳ

— Հայրիկ, ինչո՞ւ մեր Բողոքը
Միշտ հաշոււմ եւ լուսնի վրան,
Մի՞թե պայծառ լուսնիակը
Մեկ փնաս եւ տալիս նրբան:

— Վոչ, վորդյակ իմ, վոչ թե փնաս,
Այլ լույս, միայն լույս եւ տալիս,
Իսկ շանն՝ իբրև գայլի ցեղի՝
Լույս գիշերը գուր չի գալիս:

Բայց լուսինը խոմ չբզիւմ,
Վոր իր վրա հաշոյներ կան, —
Նա լուռ ու մունջ՝ բակ բոլորած՝
Շարունակում ե իր ճամպան:

«Մենք ել, վորդյակ, լուսնի նման
Պետք ե լույս տանք մութ աշխարհին,
Յե՛վ համարենք, թե չենք լսում
Մեզ վրբա գուր հաշոյներին»:



ՀԱՍ Հիմնարար Արտ. Արտ.



220038290

[084.]

170

(A) $\frac{\text{II}}{38290}$

~~9922604~~

Г. АГАЯН
СТИХОТВОРЕНИЕ
ГКЗ АРМ ССР, ЕРЕВАН